

3819

Հրատարակող: Գրական հասարակական հրատարակչություն
Երևան

2015

Ե. Ի. ԿՈՒՊՐԻՆ

5₄.

ՏՐԱՄԻԱՅՈՒՄ

1508

891 71
4-96

ՈՐԱԳՈՅՆ ԳՐԱԳՆԵՐ

№ 4

10 NOV 2011

30 SEP 2006

891.71

4-36


սք.

№ 4 ԲՈՒՄ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐԱԴՆԵՐ № 4

Ե. Ի. ԿՈՒՊՐԻՆ

ՏՐԱՄԻԱՅՈՒՄ

1001
1664
1001



Թարգմ. Օլգա Գեմջեանի

ԹԻՖԼԻՍ

Արագատիպ «Էսսէրանո»

1911

2 0 1 2

30 SEP 2005

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ


115401-ԱԷ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ



Տ Ր Ա Մ Ի Ա Յ Ո Ւ Մ

Ա. Ի. Կուպրինի

Նեակիյ և Կիաէյնիյ փողոցների անկիւնն է: Ձմեռ է: Երեկոյ է: Հալոցք է:

Խոնաւ մառախուղը բարձրանում է գետնից և ծանրանում է փողոցի վրայ: Այդ բնական քօղի միջով տները չէին նշմարւում, բայց կապոյտ և ծիրանագոյն էլեկտրական լապտերները պապղում էին ինչպէս խոշոր բծեր, կիւնեմատոգրաֆների պատուհանները փայլում էին կարմրակապոյտ գոյնով, և յանկարծ բուսնում էին ոսկէ շարախինդ աչքերով աղմկող աւտոմոբիլները: Հետիոտները, կառքերը, մո-

տորները, տրամվայները, մանչերը իրանց ձեռակառքերով, վերսիպեղների անընդհատ հոսանքը խոնուում են այդ խաշանիշ ճանապարհի վրայ, պահուում պտտուում են նրա վրայ, ինչպէս յորձանքի մէջ, և հոսում են առաջ: Ձիաների մաղեր դանգուել են և գոլորշի են արձակում: Եւ մարդկանց վրայ է տարուբերում նրանց արձակած գոլորշին:

Ինչ ամբոխ է! կարծես ամբողջ քաղաքը, ինչպէս ժապաւէն, անվերջ բացուում է աչքիդ առաջ: Պօսակցութիւն, ծիծաղ, հազ, թմբթմբոց, դանգահարութիւն, բացականչութիւն, ղողանջ և անընդհատ գլուխ պտտեցնող շարժողութիւն: Միայն փողոցի էնկ կենդրոնում հանգիստ և վսեմ, ինչպէս արձան, իւր սպիտակ ձեռնափայտի օգնութեամբ առաջնորդում է ամբոխին կարմաթուշ և հաստ քաղաքապահը:

Միմիայն այսօր գնալու տեղ չը կայ,

և ոչինչ չը կայ անելու: Ամբողջ երեկոն ես շրջեցի փողոցներում մինչև աչքերս շաղկեցին: Սրտումս ինչ որ մաքուր, թէթե և տխուր դատարկութիւն է տիրում, և մտքումս հնչում է, անդադրում, Ա. Բլօկի քաղաքի մասին, դրամի նման հատուած ոտանաւորը:

Տրամւայը, չը հասնելով խաշանիշ փողոցը, կանգնում է: Ես յիշում եմ իմ յոգնածութիւնը և ցանկանում եմ վազոն նստել ու հանգստանալ: Բայց Տէր իմ— Աստուած! ինչ վայրենի, կատաղի հրօսակ է պաշարում վազոնի աստիճանները: Դէպի վեր բարձրացող սպառնալի արմուկներ, ճանկող մատներ, սեղմող ազդրեր, չարութիւնից և անհամբերութիւնից ծումուած երեսներ: Ախ, այդ կնճուած, արտասուալից Պետերբուրգի երեկոներին— ինչպէս գունատ, զգւելի և վուլգեր է լինում մարդկանց երեսներն, մինչև ան-

գամ նրանցից ամենաբարակները և ամենաքնքոյշները:

Պարոններ տղամարդիկ! ինտելիգենտներ! Ղենալմեններ! թոյլերի հովանաւորողներ!... Հարցը միայն մի շահու մէջ է—միք հրհրիլ կանանց, միք սղմիլ երեխաներին! Տիկիներ! Դուք, աշխարհի զարգեր, արարչի թագի լաւագոյն գոհարներ, երկնային հրեշտակների պատկերներ! Երեւակայեցէք ինքներդ ձեզ տրամալի մուտքին վեր ելնելիս, հրաշէջ զինւորների, որոնք արիութեամբ և ձևերով բարձրանում են սանդուղքով դէպի կրակը: Ձեր ձեռքերը տարածած, զլխարկներդ մի կողմ թեքած, իսկ շտապով բարձրացրած ձեր շրջազգեստի փեշը թոյլ է տալիս տեսնելու ներքևի զգեստի, փողոցի կեղտից գորշացած, եզերքը և նրա տակից միւս կարմիր հաստ բրթէ զգեստի ծայրը, և այն խոր ցցւած ականջ-

ներով ուտինէ կրկնակօշիկը, որը չը գիտեմ ինչ պատճառով կոչւում է «բագ»... Մտածեցէք, ինչ թախծով դիտելիս պիտի լինի այդ տեսարանը պատանճամբ պատանի-անցորդը—հոգու մէջ իդէալիստ և բոմանտիկ:

Եւ կուուելու տեղիք էլ չը կար: Վագոնը շարժուեց, և—նայեցէք—բոլորը ցընցուեցին, սղմուեցին, տեղաւորուեցին, բուրբիս էլ տեղը բաւականացաւ: Փոքր ինչ առաջուայ բարկութիւնը կամաց-կամաց խաղաղուում է մեր մէջ: Մի առ ժամանակ դեռ ևս անզգայարար մենք բոլորս աւտում ենք այն պատկանելի տիկնոջը, որը գնում է հինգ տարեկան մանչի հետ միասին: Նա նրա համար չը վճարեց և, ճիշտն ասած, նա պէտք է նրան իւր ծնկների վրայ պահէր, բայց նա նրան նստացրեց իւր քովը: Իհարկէ մենք իբրաւունք ունէինք նկատողութիւն անելու

Նրան և պահանջել... բայց մեր նեարդե-
րը արդէն թուլացել են: Բայց և մանչն
էլ հմայիչ է: Նա հագած ունի սպիտակ
գլխարկ և սլապոնն թաւամազ թաւիշից
սպիտակ վերարկու: Ինչպիսի հրաշալի
սպիտակ արջուկ է, վարդագոյն երեսով
և խելօք ու սև աչիկներով...

Բաւական խեթ աչքով նայում ենք մենք
նոյնպէս մի դեռահաս դերձակունու վրայ:
Վատ կերակրելուց նրա երեսը երկար
էր և գունատ, վեր քաշած և զարմանք
արտայայտող քթով և անհաշիւ մուններով:

Նա նստած է նստարանի ծայրին պա-
հելով իւր ծնկների վրայ կարտոնները՝
յատուկ դերձակ — աշակերտունու պա-
տուէրներ ցրող մշտական ձգուած և
սպասողական դիրքով: Նա իւր բեռով
բաւականին տեղ է բռնում անցքի մօտ:
Կարելի էր խնդրել նրան դուրս գալ վա-
զոնի մուտքը: Բայց արժէր: Թող դա էլ

այդպէս լինի, մենք նրան էլ ներում ենք:

Բոլորս ներում ենք, բացի մանկավար-
ժից, որը նստած է իմ դիմացը — և ես
գիտեմ—նա տանջուած է լեարդերի վա-
ղուցուայ խանգարումից: Նստեանում եմ,
թէ ինչպէս է նա նայում արջուկի և դեր-
ձակունու վրայ: Եթէ նա հաւաստի լինէր
բոլորի համակրութեան, նա վաղուց օ-
րինաւոր կարգապահութիւն կը վերականգ-
նէր վագոնի մէջ:

Բայց մենք արդէն բարեհոգի ենք դար-
ձել: Ժամանակ—առ—ժամանակ, ճիշտ է,
մեզ բոլորիս ատելութիւն է բռնում դէպի
նորեկները, որոնք վագոնն էին մտնում
կայաններում: Նրանց հետ միասին մըտ-
նում էր մեզ մօտ և փողոցի խոնաւ մա-
ռախուղը... Ծածկուղ և բացուղ դուռը
թրխկ-թրխկում է գրգռելով մեր Պետեր-
բուրգի հիւանդ նեարդերը... Ստիպւած
էինք շարժել մեր տաքացրած և սովո-

բած տեղերից... Բայց անցնում է մէկ-երկու քապէ և նորեկները դառնում են, կարծես, արդէն մերը և մեզ հետ միասին սկսում են ատել յետոյ եկող նորեկներին, ապա և մեզ հետ միասին ընտելանում նրանց:

Պարապոլիթիւնից նայում եմ հարեաններին, նայում եմ նրանց եղունգներին, ականջներին, կնճիոներին, ծնոտներին, դիտում եմ տոմսակ վերցնողների և վճարողների մատերի ու աչքերի թեթև շարժւածքները: Ինձ թւում է, որ այժմս, հեռուից, միայն արտաքին տեսքից, ես աւելի սուր եմ թափանցում նրանց հոգու մէջ, քան այդ կարող էի անել տասը տարի մօտ ծանօթութիւնից յետոյ, որ դանդաղ, բայց անխուսափելի կերպով հիւսում է իրար մօտիկ մարդկանց, փոխադարձ խարէութեան, զիջողութեան, շողորթութեան, ստրկութեան, խանդու-

թեան, սեպհականութեան, թախձութեան, ճնշող բարկութեան և սովորութիւնների անթափանցիկ պատնէշ:

Ահա նստած է մի հաստ սպիտակաբեխ պաշտօնաթող զնդապետ: Նրա ցնցուղ այտերը ծածկուած են մանր կարմիր երակների ցանցով, ականջները բամբակ է խոթած և ձեռքերի վրայ հագած ունի գործած թևնոցներ ոսկրացաւի դէմ: Ըստ երևոյթին բարի մարդ է, բղաւող և աղ ու հացով: Սիրում է իւր ձեռքով խորոված պատրաստել և կանաչի վրայ խաչկար գործել: Ամբողջ նրա կեանքը անցեալումն է, ծառայութեան մէջ, և նա պատրաստ է խարելու, թէ ինչպէս էր «մեզ մօտ զնդումը»...

Մի օրիորդ «Mosioue»-ը կոնատակը՝ մատովի երեակայող գունատութիւնը երեսին, յոգնած պարզ, բազմագիտուն մայրաքաղաքի աչքեր, անխօս սիրահարու-

թիւն դէպի պրօֆեսսորները, դգայուն ձըգտում դէպի մուզիկան, գլխացաւ, ստամոքսի խանգարում, շոկոլադի կանֆելտներ, անկանոն ընթերցանութիւն և արեան պակասութիւն:

Երկու ներկարարութեան կապալառուներ, գուցէ և փայտէ բաժնի:

Մեծ գլխներին կարտուզներ, նեղ ճեղքւած, աչքերը փքւած քնից և ճարպից, ծնոտները, ինչպէս երկաթէ թաւաներ, ուժեղ ուռոյցքները այտոսկորների վրայ, մազակալած շիկագոյն գանգուր բրթով: Նրանք երկուսն էլ ձիարշաւանքների և մութ պանդոկների յաճախորդներ են, երկուսն էլ բռնակալ են իրանց ընտանիքի մէջ, երեխաներին տանջող, բայց Աստուածասէր, բաց չեն թողնում ոչ մի պատ՝ ոչ մեծ, ոչ ֆիլիպովկի, ոչ պետրովկայի, ոչ սպաժինկայի, բայց երկուսն էլ ընդունակ են կոպէկի համար ճանձի նը-

ման խեղդել մարդու, և միևնոյն ժամանակ պատուտկան ազգասէրներ են:

Ահա պառաւը՝ փոքրիկ, հաստ: Ամբողջ նրա երեսը երկարութեամբ և լայնութեամբ գծւած է կնճիռներով, բայց շրթունքները յաւիտեան շարժում են, կարծես թէ ծամելիս կամ անիծելիս լինեն, իսկ կասկածոտ և սրնթաց կենդանի աչքերի կոպերը կարմիր են և զուրկ արտեանունքից, և, կարծես, հին փորձառու մկան աչքեր լինեն: Եւ նրան ես ճանաչում եմ շատ լաւ: Դա անբարիշտներից է... Դուք միշտ նրան կը տեսնէք դիւանատանը—նախասենեակներում, պաշտօնատանը, դահլիճում, միշտ մուրհակները ձեռքին, դատական պահանջներով, գանգատներով, փոխադարձ պահանջներով: Դատարանը—նրա արկօճօն է, մօրֆեան է, հաշիշն է, որի վրայ նա սպառում է իր թոշակի և մեզոնիսնով ծախւած տան

վերջի փշրանքները: Բայց միտրեէ տեղից Ուրծումայից թէ Գաղեհայից, նրա հասակաւոր երեխատէր աղջիկը, դատարանական էկզեկուտորի կինը նամականք է որ գրում է նրան դառն յանդիմանութեամբ՝ «մայրիկ, ձեզ համար դատարանը մի զուարճութիւն է, ինչպէս թատրոնը, բայց լաւ կլինէր մտածէիք, որ այժմս ձմեռ է, բայց իմ երախերքս վազվզում են առանց կրկնակօշիկի և հազում են»: Հետու նստած է երիտասարդ, մաքուր և աշխոյժ դեղատան աշակերտ, իսկ քիչ հեռու—մանկաբարձուհի իր յատուկ պայուսակով: Նրա յետևի կողմը, անկիւնի մօտ նստած են երկուսը՝ մարդ ու կին, երկուսն էլ խոշոր, մսալի, մեծ և ամուր երեսներով — նա ղեմեց է, ստատիստիկ, կարելի է և խմբագիր է «Պանբազործութիւն» թերթի: Կինը—բժշկուհի է՝ ուռած, մասսիւ և զրգոտ կրծքով:

Մարդ ու կին հագած ունեն պենսնէ: Ծիծաղելի միտք է ծագում գլխումս: Ամուսնական զգուանքի բուպէներին, երևի, նրբանք երկուսն էլ հանում են իրանց ապակիները և զրանից իւրաքանչիւրի աչքերը յանկարծ դառնում են բարեհոգի, պղտոր և շիւ, իսկ քթարմատի երկու կողմից մնում են կարմիր սպիներ:

Բոլորովին անկիւնում, թեթե յենուած պատին, աչքերը կիսափակ, ձեռքերը թագցնելով շենչիւր կարած մուֆտայի մէջ, նստած էր մի տիկին:

Թէ օրիորդ, սիրուն, քնքոյշ փաղաքշող երեսով, ծնուած բաղդի խնդութեան համար: Իսկ նրա հանդէպ ոսկէ գանգրահեր, կարմրաթշիկ ուսանող: Նրա աչքերը պարզ են և կապոյտ: Նա գեղեցիկ է, հասարակ և համարձակ, ինչպէս գիւղական երիտասարդը, դրա հետ միասին—կիսահասուած ցեղական ղնդերով: Եւ ահա ես տես-

ծածկոցը, և անմեղ ձեանալով կը դնէի նրան բերանս: Երևակայում եմ, ինչպէս նա միանգամից կը գեղնէր, կը փայլէին աչքերը և կը փշշացնէր ինձ վրայ»: Այստեղ չի կարելի ծխել: Տեսնում էք յայտարարութիւնը»: Բայց ես նոյնչափ հանգիստ կը հանեմ լուցկու տուփը և լուռ կը թափահարեմ նրանով: Մանկավարժը դեղնութիւնից կը դառնայ շառագոյն, յետոյ կարմիր և կը գոռայ՝ «Կանդուկտոր, դուրս բերէք այս յանդուգն պարոնին: Նա թոյլ է տալիս իրան ծխել վագոնում»: Այն ժամանակ քրիստոնէական հեղութեամբ ես վագոնից դուրս կը գամ, կը ծխեմ և լուռ կուրախանամ, որ գոնէ րոպէական թեթևութիւն բերի մանկավարժի ճահճացած հոգուն...

Իսկ կարակուլի մուֆտայով գեղեցիկ օրիօրդին և ուսանողին, որոնք նստած են միմեանց հանդէպ, ես կասէի՝

—Երեխէրքս, ահա ես տեսնում եմ, դուք մէկ-մէկու դուր էք գալիս—ինչո՞ւ հէնց այստեղ ձեզ չը խօսակցել, պարզ սրտանց և ուրախ:

Բայց կոնդուկտորը գլուխը ներս է ցըցում վագոնի դռնից և կանչում՝

—Բասէյնի փողոց!

Եւ ուսանողը դուրս է գալիս, ձգելով իւր վերջին երկչոտ հայացքը հարեանուհու վրայ: Ինձ թւում է, և ես տեսնում եմ, թէ ինչպէս նրա կուրծքը, համազգեստի վերարկուի տակին, աննկատելի, բայց խորը հառաչում է: Նա դուրս գնաց: Տրամւայը շարժեց: Իսկ օրիորդը դառնում է դէպի պատուհան, դեղին շեղական ձեռնոցների մէջ փոքրիկ ձեռքով արագ սրբում է սև քրտնած պատուհանը և նայում է փողոցը:

Ճիշտ, բոլորը այս այնպէս է, ինչպէս

կեանքի մէջ, իսկական մեծ կեանքի մէջ, նոյնպէս անմիտ կերպով մարդիկ նեղուժ են և հրհրում են միմեանց, նոյնպէս պատահմամբ և թերահաւատութեամբ միմեանց մօտենում են, նոյնպէս կասկածանքով և չարութեամբ դիմաւորում են նոր եկողներին, նոյնպէս երկչոտ և խուփ, խեթ հայացքով ունքերի տակից, սեղմուժ են իւրայիմներին, մօտիկներին, արդէն ընտելացածներին, նոյնպէս ընկնում են երկիւղի և վիրաւորանքի մէջ ամէն մի մտքի և ամէն մի խօսքի անսուտր արտայայտածքից, և նոյնպէս յաւիտեան քաց են թողնում անկապ մանրակրկիտ կենցաղավարութեան կանոնների պատճառով այն մեծ բաղդաւորութիւնը, որը լուսաւորում է մարդկանց սրտերը, միայն շնորհիւ պատահմունքի, անցողակի հանգամանքի:

Եւ ահա մեր ամբողջ մոլորակը, գեղե-

ցիկ երկիրը ներկայանում է ինձ, ինչպէս փոքրիկ տրամաշ, տանելով ինչ որ առեղծւածային երկրի վրայով դէպի յաւիտեանականութիւնը:

Վազոնավարը առաջն է—անտեսանելի ամենից, իւր խորհրդաւոր օրէնքներին հնազանդ ժամանակը, կոնգուկտորը—Մահն է:

Եւ իրաւ, համեմատելով դարերը, մինչև մեր ժամանակները եղած դարերի հետ, արդեօք միատեսակ կարճ չեն, ինչպէս և մեզանից յետոյ եկող մեր ճանապարհը տրամաշի մէջ և մեր մարդկային կեանքը?

—Կապոյտ տոմսակներին վերջ!—յայտարարում է բաղդը, ցցելով գլուխը դրոների միջից:

Ինձ մօտ իսկապէս կապոյտն է: «Թէ որ վերջն է, թող վերջն էլ լինի,—մտածում եմ:—Չէ որ ինձ համար միևնոյն էր, թէ որտեղ գնալ»: Եւ ես դուրս եմ գա-

լիս տրամալայից փողոցը, մառախուղի,
խաւարի և ցեխի մէջ:

Միրելի օրերդ կարակուլի մուֆտայով
երգուում եմ ձեզ, որ կեանքը սարսա-
փելի կարճ է: Այժմս, ձեր հասակում
դուք երևակայել անգամ չէք կարող թէ
որչափ վաղանցուկ է նա: Դուք մի վա-
խենաք, ես չեմ ասի ձեզ պահեստի սպա-
յի դատարկ ֆրագաններ»... դրա համար էլ
հարկաւոր է օգտուել նրանից լիովին»,
կամ,—դրա համար էլ հարկաւոր է բոլորը
վերցնել նրանից, ինչ որ կարելի է...»
Օճ, ոչ, մարդուն պատկանում է լինել
ողջախոն սէրի մէջ, հաւատարիմ ընկե-
րութեան մէջ, ողորմած դէպի հիւանդը և
ընկածը, փաղաքշալից դէպի կենդանիները:
Բայց եթէ յանկարծ ձեր սիրտը ան-
հոգ կերպով կը քաշի ձեզ, չը ընդդիմա-
նաք նրա հրաշալի տիրապետութեան, չը
հաւատաք ոչ զառամեալ փորձառութեան

խորհուրդներին, ոչ հաշիւին, ոչ ընդու-
նւած սովորութիւններին՝ հաւատացէք
սրտին և գնացէք նրա յետեից: Մարմի-
նը կը խաբի, սիրտը—եբրէք:

Բայց երբ կը գայ ձեր տոմսակի վեր-
ջը, գնացէք առանց տրտնջալու դէպի
խաւարը: Այժմս ձեզ, յիշուի, տանը սպա-
սում է սովորական թէյը կրենդիլներով,
և պատերից կախած ձանձրալի նկարնե-
րը և արդէն զգուեցնող երեկուայ խօ-
սակցութիւնները թատրոնի, զրականու-
թեան և այսօրուայ լրագիրների մասին:
Այնտեղ, զխաւոր կայարանում, ինչ ի-
մանալ, կարելի է մենք կը տեսնենք փայ-
լուն պալատներ յաւիտենական երկնքի
տակ, կը լսենք քնքոյշ, քաղցրահնչիւն
երաժշտութիւն, կը վայելենք չը տես-
նւած ծաղիկների բուրմունքը: Եւ բոլորս
կը լինենք հիանալի, ուրախ, ողջախո-

3819

հուժեան չափ մերկ, մաքուր և սուգո-
րուած սէրով:

Բայց աղաչում եմ մի բան միայն՝ չը
իջնել տրամալից մինչև նրա լիովին
կանգնելը:

Անմիտ է, տգեղ և յիմար:



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0516460

ՌՈՒՍ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐ

Հոյս են տեսել

1. Գ. ԱՅԶՄԱՆՆԻ Հանգոյցի լուծումը 3 կ.
2. ԱԵՅԵՆԻ ԱՆԴՐԷՅԻ Անպարտութիւն 5 կ.
3. ԿՍԵՆԻԱ ՄՕՐՕԶՕՎԱ Ինչո՞ւ են ջախջախւած երջանկութեան թևերը 3 կ.
4. Ա. Ի. ԿՈՒՊՐԻՆՆԻ Տրամաշուտ 5 կ.

Տպագրում է

ՕՍԻՊ ԴԻՄՈՎՆԻ Վեպտալուհի:

Պատրաստում են տպագրութեան համար հետևեալ հեղինակների գրածները՝ ԵՎԳԵՆԻՅ ՉԻՐԻԿՈՎ, ԱՆՐԳԷՆԻՅԵՆՍԿԻ, ԲՈՐԻՍ ԶԱՅՅԵՆ, ՓԵՕԴՐՍՍՈՂՈՎՈՒԹ, ՐԵՄՆԻՉՈՎ, և այլն:

Վաճառում են Թիֆլիսի գրավաճառանոցներում:

Պահատը՝ Тифлисть, Елизаветинская, 114. Генэжіань.